7234

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«05» 05 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0047-22

Ձեռնարկողը՝ **«ՄՈՒՍԱՀԱ» ՍՊԸ**
Շիրակի մարզ, գ. Ախուրյան

Գործունեությունը՝ **«Ախուրյան» փիէկ-2-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0047-22
<05> 05 2022թ.

«Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՄՈՒՍԱՀԱ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ամասիա համայնք

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 1-ին կետի բ. ենթակետի՝ «հիդրոէլեկտրակայաններ՝ 1-10 մՎտ հզորությամբ» «Ախուրյան» փհէկ-2-ի կառուցումը դասակարգվում է Գ կատեգորիայի:

«ՄՈՒՍԱՀԱ» ՍՊ ընկերությունն /այսուհետ՝ Ընկերություն/ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականներով (սեփականության իրավունք) ամրագրված՝ էներգետիկայի և արոտավայրերի գործառնական նշանակության հողատեսքերում նախատեսում է կառուցել «Ախուրյան» փհէկ-2 (որի համար Ընկերությանը ՇՄՆ ՋՌԿԳ-ի կողմից 12.06.2019 թ. տրամադրվել է № 000056 ջրօգտագործման թույլտվություն և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրվել է էլեկտրական էներգիայի արտադրության ԼԷ № 0657 լիցենզիա:

Նկարագրական մաս. Նախագծված «Ախուրյան» փհէկ-2-ի կառույցները տեղակայվելու են Շիրակի մարզում, Ամասիա խոշորացված համայնքի՝ Ջրաձոր բնակավայրի վարչական տարածքում: Ջրառն իրականացվելու է Ախուրյան գետի 1770 մ նիշում՝ շահագործվող «Ջրաձոր» փհէկ-ի ջրահեռացման նիշից /1772.5 մ/ 320 մ ներքև: ՓՀԷԿ-ի ջրահեռացման կետը /նիշը 1731 մ/ գտնվում է կառուցվող Կապսի ջրամբարից 380 մ վերև /ջրամբարի հայելու նիշը 1727 մետր է/: ՓՀԷԿ-ի ջրառի և ջրահեռացման նիշերը և կոորդինատները սահմանված են ջրօգտագործման թույլտվությամբ:

ՓՀԷԿ-ի կառույցները տեղակայվելու են Ջրաձոր գյուղից մոտ 4,0 կմ հեռավորության վրա: Ջրաձոր գյուղից մինչև պատվարային ջրընդունիչ առկա է 4,5 կմ երկարությամբ գրունտային ճանապարհ, որով կկազմակերպի շինարարական աշխատանքների իրականացումը: «Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման տարածքներում բացակայում են ծառաթփուտային բուսականությունը, քանի որ դիտարկվող գետահատվածում (դիտակետ Ամասիայից հետո) խորը ժայռեր և ժայռաբեկորներ են: Համաձայն հայտի տեղեկատվության՝ նախագծված փհէկ-ի կառույցների տարածքում

բացակայում են բնության և պատմամշակութային հուշարձանները կամ մշակութային վերգետնյա հետքերը:

Ախուրյան գետը Արաքս գետի խոշորագույն ձախակողմյան վտակներից է, տիպիկ լեռնային գետ է: Գետի առավելագույն ելքերը դիտվում են հիմնականում գարնանային ջրառատության ժամանակ և պայմանավորված են ձյան ինտենսիվ հալոցքով ու հորդառատ անձրևներով: Գետի ընդհանուր ջրհավաք մակերեսը 9670 կմ^2 է, երկարությունը՝ 186 կմ, միջին թեքությունը՝ 6%, անտառածածկույթը՝ 2%: Սկզբնամասում գետն անցնում է հարթավայրով, Ախուրյանի ջրանցքի գլխամասային հանգույցից մեծանում է գետի թեքությունը և գետն անցնում է խորը հունով, ժայռապատ ափերով:

Ախուրյան գետի հոսքը կարգավորվում է Արփի լճով: Քանի որ Ախուրյան գետից Ախուրյան-Ամասիա ջրաչափական կետով անցնող ջրաքանակը չի արտահայտում գետում առկա իրական ջրաքանակ՝ պայմանավորված ջրաչափական կետից վերև այլ ջրօգտագործողների առկայությամբ (Ախուրյանի ոռոգման ջրանցքի ջրընդունիչ հանգույց, «Ջրաձոր» «փհէկ-ի ջրառ»), ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի թիվ 1347-Ն որոշմամբ հաշվարկվել և սահմանել է բնապահպանական թողքի արժեքները: «Ախուրյան» փհէկ-2-ի ջրընդունիչ կետի ուղղահատածքը համընկնում է Ախուրյան-Ամասիա ջրաչափական կետի ուղղահատածքի հետ: Գետում հաշվարկված բնական հոսքի արժեքներով սահմանվել է բնապահպանական թողքի արժեքներն ըստ ամիսների և նվազագույնը կազմում է 1,75մ^3/վրկ /նոյեմբեր ամսից - փետրվար ամիս/, իսկ առավելագույնը՝ 2,97 մ^3/վրկ /օգոստոս ամիս/: Ջրատնտեսական հաշվարկներում «Ախուրյան» փհէկ-2-ի հաշվարկային ելքն ընդունվել է առավելագույնը 8.0 մ^3/վ /մարտ-հունիս/ իսկ նվազագույնը՝ 1.67 մ^3/վ /դեկտեմբեր/: Թողքի սահմանված չափաքանակն ապահովելուց հետո, գետի մնացորդային հոսքը նախատեսված է «Ախուրյան» փհէկ-2-ի կողմից օգտագործել էլեկտրաէներգիայի արտադրության համար: ՓՀԷԿ-ի համար օգտագործվող գետահատվածում ոռոգման, կամ այլ նպատակով ջրառներ չեն իրականացվում, «Ախուրյան» փհէկ-2-ի ջրառն իրականացվելու է Ախուրյան գետի վրա շահագործվող փհէկ-երի ջրահեռացումից հետո:

«Ախուրյան» փհէկ-2-ի հիմնական ջրաէներգետիկ ցուցանիշները կլինեն՝

Դրվածքային հզորություն՝	- 2180 կՎտ
Հաշվարկային ճնշում՝	- 32,5 մ
Ստատիկ ճնշում՝	- 39.0 մ
Հաշվարկային ելք՝	- 8.0 մ^3/վրկ
Էլեկտրաէներգիայի տարեկան արտադրություն՝	- 12.77 մլն.կՎտժ
Դերիվացիոն խողովակաշարի երկարություն	- 1418 մ
Հիդրոագրեգատների քանակ՝	- 3 հատ:

«Ախուրյան» փհէկ-2-ն իր մեջ ներառում է հետևյալ կառուցվածքները՝

- Պատվարային ջրընդունիչ,
- Ճնշումային խողովակաշար,
- ՀԷԿ-ի շենք՝ հեռացնող ջրանցքով և տրանսֆորմատորային ենթակայան:

Պատվարային ջրընդունիչը բաղկացած է 2,6 մ բարձրությամբ բետոնային ջրթափային պատվարից /ՆԴՄ-ի նիշը՝ 1770,0 մ/, հաշվային ելքի (Q=8,0մ3/վ) ընդունման համար նախատեսված ջրընդունիչից /շեմքի նիշը՝ 1769,7մ/: Ջրընդունիչում նախագծված է 4 լվացման սրահներ /վերին բյեֆում կոտակված կոշտ

ջրաբերուկները լվանալու և առավելագույն ելքերը ներքին բյեֆ հեռացնելու համար/, որոնց մուտքամասերը կահավորված են փականներով: Պատվարն ունի երկու սեկցիաներ, որոնցից առաջինի լայնությունը կազմում է 6,2 մ, իսկ ջրթափային մասը՝ 5,0 մ, իսկ երկրորդ սեկցիայի լայնությունը, որտեղ նախատեսվում է կառուցել ձկնուղի, կազմում է 6,2 մ: Ձկնուղու շենքի նիշն ընդունված է 1769.4 մ, ինչը 0,6 մետրով ցածր է պատվարի նիշից:

Ձկնանցարանն իրենից ներկայացնում է ուղղահայաց կտրվածքով գլաքարերով պատված կառուցվածք, որն ունի 26 մ երկարություն, 1,1 մ լայնություն, 10 հատ ձկնանցարանային բլոկներ: Ձկնուղու միջոցով բաց է թողնվում բնապահպանական ելքը և ապահովվում է ձկների տեղաշարժը վերին բյեֆից ներքին բյեֆ և հակառակ ուղղությամբ: Ձկնուղում ջրի արագության կարգավորման համար նախատեսվել է կոնստրուկտիվ լուծումներ /ելուստներ, որոնք կփոքրացնեն ջրի արագությունը/:

Նախատեսված ձկնուղու նախագծային լուծումների, տիպի, չափերի, ֆունկցիոնալ նշանակության և վերջինիս Ախուրյան գետում բնակվող ձկների տեսակներին և չափերին համապատասխանության վերաբերյալ, Հայտին կից փաստաթղթերում ներկայացվել է ձկնաբան - փորձագետ Ս.Խ.Պիպոյանի կողմից 18.11.2021 թ. տրված փորձագիտական եզրակացություն: Համաձայն եզրակացության՝ առաջարկվող ձկնանցարանը համապատասխանում է Ախուրյան գետի տվյալ հատվածում հանդիպող տեղաբնակ ձկնատեսակների /այդ թվում՝ արևելյան տառեխիկ, Կուրի սպիտակաձուկ, Կուրի բեղաձուկ, կողակ, արևելյան թեփուղ, Կուրի ենթաբերան, Վեյսելի լերկաձուկ, երբեմն նաև կարմրախայտ և ծածան/ կենսաբանական պահանջներին, հատկապես թռիչքային արագության նվազագույն հնարավորություններին: Փորձագետի եզրակացությամբ փիէկ-ի կառուցման գետահատվածում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված հաշամ ձկնատեսակի Aspius aspius (ներկայում՝ Leuciscus aspius) հանդիպման հնարավորությունը բացառվել է: Այդ ձկնատեսակի պոպուլյացիայի անհետացման վերաբերյալ ամրագրված է նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:

Ջրընդունիչ հանգույցում նախատեսված է ձկնապաշտպան ցանցի կառուցում՝ 2.5 սմ ուղղահայաց ձողերի միջոցով, որի չափսերը սահմանվել է ելնելով մանրաձկան չափերից: Ձկների մուտքը ճնշումային խողովակաշար արգելելու նպատակով ջրընդունիչը նախատեսվում է ծածկել մետաղական թիթեղով:

«Ախուրյան» փիէկ-2-ի ճնշումային խողովակաշարը նախատեսված է երկճյուղ մետաղական /8.0 մ^3/վրկ ջրթողունակությամբ/, որի յուրաքանչյուր ճյուղի տրամագծերը ըստ երկարության փոփոխվում է հետևյալ պարամետրերով՝

ՊԿ0+0 մինչև ՊԿ0+20 տրամագիծը՝ 2000 մմ
ՊԿ0+20 մինչև ՊԿ1+20 տրամագիծը՝ 1600 մմ
ՊԿ1+20 մինչև ՊԿ14 +18 տրամագիծը՝ 1400 մմ

Խողովակաշարը սկսվում է ջրընդունիչի ջրհորից, անցնում է գոյություն ունեցող ճանապարհի եզրով և ավարտվում տուրբինային փականի մոտ: Այն L = 1418 մ երկարությամբ անցկացվում է խրամուղով, հանվող՝ 30900 մ^3 գրունտի ծավալը ամբողջությամբ օգտագործվում է հետլիցքի համար:

ՀԷԿ-ի շենքը /որի չափերը կազմում են՝ 10.0 x 24.0 x 7.5 մ/ կառուցվելու է Ախուրյան գետի ձախ ափին: Այն վերգետնյա է, որտեղ նախատեսվում է տեղադրել երեք հիդրոագրեգատներ՝ բաղկացած ռեակտիվ շառավղա-առանցքային տուրբիններից և սինխրոն գեներատորներից: Ընկերությունը նախատեսում է

տեղադրել «ֆրենսիս» տիպի 1250 կՎտ հզորությամբ մեկ հիդրոագրեգատ և 630 կՎտ դրվածքային հզորությամբ երկու հիդրոագրեգատներ, որոնք տարվա ցանկացած ժամանակահատվածում գետի ջրաքանակից կապահովեն առավելագույն էլեկտրաէներգիայի ստացում: ՓՀԷԿ-ի շենքում տեղադրվելու է կամրջային ամբարձիչ՝ 10 տ բեռնաբարձությամբ: Մեքենայական շենքի պատերը արվում են քարի մեդիսային շարվածքով, իսկ ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից: ՓՀԷԿ-ի օգտագործած ջրերը հանգստանալով ջրծեծ հորում՝ 3 հատ մետաղական խողովակների միջոցով հեռացվում է դեպի գետ, որտեղից էլ՝ նոր վերակառուցվող Կապսի ջրամբար: Նախագծով նախատեսվում է կառուցել տրանսֆորմատորային ենթակայան՝ 6/35 կՎտ հզորությամբ, որի անվտանգությունն ապահովվելու է տարածքի ցանկապատումով: Տրանսֆորմատորի տակ նախատեսվում է երկաթբետոնյա հոր, որտեղ կհեռացվի յուղի հնարավոր արտահոսքը: Օպերատորային սենյակը ապահովված է լինելու հակահրդեհային միջոցներով, ձայնամեկուսիչ և ջերմամեկուսիչ հարմարանքներով, ունենալու է բիոզուգարան:

«Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման տարածքներում, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ /գլխամասային հանգույց, ճնշումային խողովակաշար, հէկ-ի շենք/ բացակայում են ծառաթփուտային բուսականությունը և բուսահողը, քանի որ գետահատվածի երկու ափերը ամբողջությամբ ներկայացված են ժայռաբեկորներով և գլաքարերով /բուսահողի պահպանության միջոցառումներ չեն նախատեսվել:

Հայտում վերլուծվել և որոշվել է «Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության շրջանակները և նախատեսվել են միջոցառումներ՝ գործունեության ենթակա տարածքներում շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, ջուր, մթնոլորտային օդ և կենսաբազմազանություն) վրա հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Ազդեցությունների վերլուծությունը գնահատվել է ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունների (փոշի, աղմուկ, շինարարական աղբ) մեղմացման համար նախագծում նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- չոր եղանակներին շինհրապարակի, հողային գրունտի խոնավացում,
- հողային աշխատանքների իրականացում՝ փոշեորսիչ հորատող սարքավորումներով,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի վերահսկում,
- վառելիքաքսուկային կամ այլ նյութերի շահագործման կանոնների պահպանում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինհրապարակների մաքրում և խախտված տարածքների վերականգնում :

ՀԷԿ-ի շենքի շինարարության ավարտից հետո, հարակից տարածքը նախատեսված է կանաչապատել տվյալ տեղանքին բնորոշ ծառատեսակներով և բարեկարգել շինություններին սպասարկող ճանապարհները՝ կառուցելով ջրանցումներ և իրականացնել էրոզիաի առաջացումը կանխարգելող միջոցառումներ: Նախատեսված է նաև իրականացնել գետի ձախ ափի հեղեղպաշտպան

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

միջոցառումներ: Նախագծում բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը գնահատվել են 2300,0 հազ. ՀՀ դրամ, որի մեջ մտնում է կանաչապատման, բարեկարգման, փոշու կանխման միջոցառումների գումարային ծախսերը:

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Ամասիա համայնքում և Ջրաձոր բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության: Քննարկումների ընթացքում բարձրացվել են հարցեր՝ կապված գործունեության տարածքում պատմամշակութային շերտերի առկայության, Կապսի ջրամբարի կառուցման դեպքում ջրօգտագործման թույլտվության պայմանների վերանայման և Ջրաձոր բնակավայրի բնակիչներից որպես աշխատուժ՝ շինարարական և շահագործման աշխատանքներում ներգրավվման հետ: Հարցադրումների վերաբերյալ ներկայացվել են պատասխան հիմնավորումներ: Քննարկումների ընթացքում Ընկերության ներկայացուցիչն իր պատրաստակամությունն հայտնեց հէկ-ի կառուցապատման ընթացքում ապահովել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան բոլոր նախագծային լուծումները և մասնակցել համայնքում առկա սոցիալական խնդիրների լուծմանը (այդ թվում՝ ֆինանսական հատկացումներ համայնքային բյուջե և այլն):

Փորձաքննության գործընթացում նախնական գնահատման հայտը վերադարձվել է ձեռնարկողին լրակազմման: Լրամշակումներում հաշվի է առնվել նաև փորձաքննական գործընթացում ներգրավված փորձագետ-հիդրոլոգ՝ Բ. Զաքարյանի մասնագիտական եզրակացությամբ ներկայացված առաջարկությունները և դիտողությունները: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Շիրակի մարզպետարանը, առողջապահության նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել: ՇՄՆ ստորաբաժանումների մասնագետների հետ համատեղ քննարկվել է «Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման նպատակահարմարությունը:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ կարելի է եզրահանգել, որ նախագիծը մշակվել է հէկ-երին ներկայացվող շինարարական նորմերին և բնապահպանական օրենսդրական պահանջներին համապատասխան: Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունները հնարավորինս կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ

1. Քանի որ ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի թիվ 1347-Ն որոշմամբ հաշվարկվել և սահմանել են Ախուրյանի ՋՏԿ-ի գետերի ամսական էկոլոգիական թողքի արժեքներն /գետաբերաններում հաշվարկված/, ինչը հաշվի է առնվել նաև «Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման նախագծում և ջրատնտեսական հաշվարկներում, անհրաժեշտ է մինչև գործունեության իրականացումը ստանալ նոր Ջրօգտագործման թույլտվություն:

2. Կապսի ջրամբարը 60 մլն/մ^3 ծավալով կառուցելու դեպքում Ջրօգտագործման թույլտվությունն անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցնելով ջրամբարի շահագործման ռեժիմին և ծավալին:

3. Շինարարության և շահագործման փուլերում հէկ-ի ջրօգտագործման պայմանների կատարումը հսկելու համար, մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել ջրօգտագործման ծավալների հաշվառման, դրանց առցանց տեղափոխման և հասանելիության ապահովման աշխատանքներ՝ ջրառի կետը ջրաչափական դիտակետով ու կապարակնքված ջրաչափերով ապահովելու միջոցով (հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի պահանջները):

4. Շահագործման փուլում, Ախուրյան գետի օգտագործվող գետահատածքում բնական միջավայրի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև բնապահպանական թողքերի ամսական ջրաքանակների ապահովման և վերահսկման համար, անհրաժեշտ է՝ բնապահպանական թողքի կետն ապահովել ջրի մակարդակի ավտոմատ կառավարման և տվյալների առցանց հաղորդման ջրաչափական սարքավորումներով:

5. Շահագործման փուլում առաջացող տարբեր տեսակի թափոնների (այդ թվում վտանգավոր թափոններ՝ տրանսֆորմատորային յուղ, բանեցված յուղեր, քսայուղեր և այլն) տեղադրումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄՈՒՍԱՀԱ» ՍՊԸ կողմից ներկայացված «Ախուրյան» փհէկ-2-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Ա. Մկրտչյան

Ընդամենը՝ 6 էջ